

Եէնի Քարուի եւ Կէտիկ բաշայի եկեղեցիներու մէջ ալ պաշտօն կը վարեն. սակայն չկարենալով իրենց օրական ապրուստը ճարել – որովհետեւ շատ կ'ուտեն – շատ անգամ իրենց ծովներուն տուները կ'մնան, անոնց ննջեցելոց հոգւոյն համար կ'ուտեն կ'խմեն: Ասոր համար է, որ շատ անգամ եկեղեցւոյն մէջ քահանայ չգտնուիր: Մայր Եկեղեցւոյ բակը երկու գերեզման կտեսնես. ասոնց միոյն մէջ թաղուած է Տատեան Պօղոս ամիրայ եւ միւսին մէջ կքնանայ Պեզճեան Յարութիւն, որ երկու հազար դահեկան ամսական կտակած է Մայր Վարժարանին, հազար դահեկան ամսական արտաքին Քում Քարուի վարժարանին եւ յիսուն դահեկան ամսական բանտի եկեղեցւոյն. ափսո՛ս որ ազգային լրագիրներուն համար եւ Պատրիարքարանի փոշիներուն մաքրուելուն համար բան մը չէ կտակած:

Եկեղեցւոյն քովն է թաղին վարժարանը, որ համբաւաւոր եղած է իւր յարուցած վեճերովը: Դասատուները շաբաթը մէկ անգամ կ'փոխուին հոս. ամեն օր նոր դասատու եւ նոր դրութիւն: Չար լեզուները կ'ըսեն, թէ այս վարժարանին մէջ ամենէն աւելի յարգ եւ պատիւ գտնող դասատուներն անոնք են, որ աշակերտներուն շատ թուղթ, գրիչ, մելան եւ մատիտ սպառել տալու դրութիւնն կ'յարգեն, եւ այս դրութիւնը շատ հաճելի է եղեր Հոգաբարձութեան անդամներուն:

Մենք չենք ուզեր հաւատալ, բայց հաւատացողներուն ալ հաւատքը հերքելու չափ զօրաւոր փաստեր չունինք դժբախտաբար: Աստուած չընէ, եթէ հոգաբարձուներէն մէկն դերձակ ըլլար՝ աշակերտները շաբաթը մէկ անգամ նոր հագուստ հագնելու պիտի ստիպուէին: Իսկ եթէ մէկն ալ սափրիչ ըլլար՝ անպատճառ հետեւեալ տողերը Ներքին Կանոնագրութեան մէջ պիտի անցնէին. «Աշակերտները պարտաւոր են օրը երեք անգամ կտրել տալ իրենց մազերը»:

Ո՛վ անձնանուիրութիւն, գոնէ անգամ մը քու երեսդ տեսնելու պատիւը պիտի չունենա՞նք: Տրտմիլ պէտք չէ. կեդրոնական զբօսարանը գնա քիչ մը որ բացուիս: Աջդ դարձիր, եւ դէմդ կելնեն երեք զբօսարան. մէջ տեղի զբօսարանը մտիր, ուր սեղանի մը վրայ դրուած պիտի տեսնես ազգային քանի մը լրագիրներ, որոնց վրայ դրուած կան օղիի շիշեր եւ գաւաթներ: Թաղին բոլոր ազգասէրները հոս կ'աճախեն եւ օղի խմելով ազգային կենսական խնդիրներու վրայ կ'խօսին: Ողջ ըլլան: Անդին քանի մը երիտասարդներ նստած, *պրիճ* եւ *բրեֆա* կ'խաղան. ողջ ըլլան ու խաղան: Անդին քանի մը անձեր ջերմ վիճաբանութեան մը բռնուած են. ասոնք թաղական խորհրդոյ անդամներ են եւ անանկ բարկութեամբ իրարու երես կ'սօտան, որ կարծես թէ ասոնցմէ մին եկեղեցիէն բան մը